Հասցեատեր՝

Արարատի Արաքս ՖԱ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ araratiaraqs@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23.02.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝	ՖԶԲԽ Փ-Օ-4
Խախտում՝	1. «Թիմ ՖԱՖ» թիմի ֆուտզալիստ Վարդան Գևորգյանի (1240) մասնակցությունը ծեծկռտուքին (Հավելված 1Ժ, 17-րդ կետ) 2. «Թիմ ՖԱՖ» թիմի ֆուտզալիստ Գրիշա Խաչատրյանի (4604) մասնակցությունը ծեծկռտուքին (Հավելված 1Ժ, 17-րդ կետ) 3. «Թիմ ՖԱՖ» թիմի մարզչի օգնական Վահան Առաքելյանի (46721) մասնակցությունը ծեծկռտուքին (Հավելված 1Ժ, 17-րդ կետ) 4. Թիմի մեղքով խաղն անավարտ թողնելը (Հավելված 1Թ, 7-րդ կետ)
Առաջնություն՝	ՖԶԲԽ Փլեյ-օֆֆ
Խաղ՝	«Թիմ ՖԱՖ» - «Լոգիկոն», 11.02.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Թիմ ՖԱՖ» թիմի ֆուտզալիստ Վարդան Գևորգյանին (1240) որակազրկել 7 (յոթ) խաղով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի փետրվարի 11-ից սկսած և ներառվում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):
   Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 5 (հինգ) խաղ, պայմանականորեն չկիրառել: «Թիմ ՖԱՖ» թիմի ֆուտզալիստ Վարդան Գևորգյանի (1240) նկատմամբ փորձաշրջան սահմանել 2 (երկու) ամիս ժամկետով՝

մինչև 2024 թվականի ապրիլի 11-ը ներառյալ: «Արարատի Արաքս ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով:

2. «Թիմ ՖԱՖ» թիմի ֆուտզալիստ Գրիշա Խաչատրյանին (4604) որակազրկել 8 (ութ) խաղով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի փետրվարի 11-ից սկսած և ներառվում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 5 (հինգ) խաղ, պայմանականորեն չկիրառել: «Թիմ ՖԱՖ» թիմի ֆուտզալիստ Գրիշա Խաչատրյանի (4604) նկատմամբ փորձաշրջան սահմանել 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2024 թվականի ապրիլի 11-ը ներառյալ: «Արարատի Արաքս ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի՝ 40,000 ՀՀ դրամի չափով:
3. «Թիմ ՖԱՖ» թիմի մարզչի օգնական Վահան Առաքելյանին (46721) որակազրկել 6 (վեց) խաղով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի փետրվարի 11-ից սկսած և ներառվում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Արարատի Արաքս ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
4. «Արարատի Արաքս ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով և «Թիմ ՖԱՖ» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:5 հաշվով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։